

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ----- 2021թ.

N----Ա

### ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ»  
ԾՐԱԳՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև 08.06.2018թ. Համաձայնագրի 5.2-րդ կետը,

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2018 թվականի հունիսի 8-ին կնքված «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ ԿՆՔՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՑՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

| Իրավական ակտի հիմնավորումը |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |
|----------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1.                         | <b>Անհրաժեշտությունը</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |
|                            | <p>Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում 2017թ.-ի դեկտեմբերի 01-ին կնքվել է Ֆինանսական պայմանագիր: Նշված ֆինանսական պայմանագիրը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու կողմից 2017թ.-ի դեկտեմբերի 26-ին:</p> <p>«Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման անհրաժեշտությունից ելնելով Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2018 թվականի հունիսի 8-ին կնքվել է 5 մլն եվրո գումարի դրամաշնորհային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):</p> <p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի ենթակայության հանրային շենքերում, մասնավորապես մանկապարտեզներում, իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներ, որոնց արդյունքում կկրճատվեն հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, ինչպես նաև տեղի կունենա արտանետվող CO2 գազի նվազեցում:</p> <p>Ծրագրի առաջին փուլով ընտրվել են 28 մանկապարտեզներ, որոնց համար իրականացվել են սեյսմիկ աուդիտ և էներգաաուդիտ:</p> |
| 2.                         | <b>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
|                            | <p>Համաձայն ֆինանսական պայմանագրի, յուրաքանչյուր հատկացման 70%-ի չափով Երևանի քաղաքապետարանը կարող է ներգրավել դրամաշնորհային միջոցներ: «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում 2017թ.-ի դեկտեմբերի 01-ին կնքված 7 մլն եվրո գումարի ֆինանսական պայմանագրի շրջանակներում ս.թ.-ի նոյեմբերի 06-ին իրականացվել է առաջին 350 000 եվրոյի հատկացումը և դրամաշնորհային հատկացումը ստանալու նպատակով անհրաժեշտ է Համաձայնագրի հաստատումը:</p>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |
| 3.                         | <b>Կարգավորման նպատակը և բնույթը</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
|                            | «Երևանի էներգաարդյունավետության ծրագրի» դրամաշնորհային համաձայնագիրը հաստատելուց հետո հնարավոր կլինի իրականացնել գումարների ներգրավում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
| 4.                         | <b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |
|                            | Նախագիծը մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿԻ կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
| 5.                         | <b>Ակնկալվող արդյունքը</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
|                            | Համաձայնագիրը Երևան քաղաքի ավագանու որոշմամբ հաստատվելու դեպքում հնարավոր կլինի դիմել Եվրոպական ներդրումային բանկին՝ դրամաշնորհային միջոցների ներգրավման համար:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ

Հ. ՄԱՐԳՍՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ  
«ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետության ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն առկա չէ:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ  
«ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ  
ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետության ծրագրի դրամաշնորհային համաձայնագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ համայնքային բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

**Երևանի էներգաարդյունավետության ծրագիր**

**Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջական միջավայրի  
հիմնադրամի**

**Դրամաշնորհային համաձայնագիր**

*Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջական միջավայրի  
հիմնադրամի ծրագիր. կնքված Եվրոպական ներդրումային բանկի և  
վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև՝ ֆինանսավորման  
համաձայնագրի շրջանակների ներքո*

**Երևանի քաղաքապետարանի**

**և**

**Եվրոպական ներդրումային բանկի միջև**

08 հուլիսի 2018թ, Երևան

**Երևանի քաղաքապետարանը** ներկայացված է  
քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից

Հասցե՝ Երևան- 0015, Արգիշտի 1փող.,

Առաջին (**Շահառու**),

և

**Եվրոպական ներդրումային բանկը**  
ներկայացված են պրն. Լիոնել Ռապայելի,  
վարչության ղեկավար և պրն. Դիրկ  
Էլլերկմանի, վարչության ղեկավար կողմից  
Կենտրոնական գրասենյակի հասցե՝ L-2950  
Լուքսեմբուրգ, 98-100 Քոնրադ Քոնրադ  
Ադենոր; ներկայացված՝

(Բանկ)-ը

Որպես երկրորդ կողմ,

Ինչպես նաև համատեղ **“կողմերը”**,

Համաձայնեցին հետևյալի վերաբերյալ՝

## Հոդված 1 - Նպատակ

- 1(1) 2017թ-ի դեկտեմբերի 1-ին Շահառուն և Բանկը կնքեցին Ֆինանսական պայմանագիր (Երևանի էներգաարդյունավետություն) («Ֆինանսական պայմանագիր»), որի գումարը կազմում է մինչև 7,000,000.00 եվրո (յոթ միլիոն եվրո) («ԵՆԲ վարկ»), աջակցելու Երևանում հասարակական շենքերի կայուն էներգաարդյունավետության բարելավման նախագծին, ինչպես նկարագրված է հավելված 1-ում («Ծրագիր»):
- 1(2) 2017թ-ի դեկտեմբերի 7-ին Արևելյան Եվրոպայի էներգաախնայողության և շրջակա միջավայրի համագործակցության հիմնադրամի («E5P հիմնադրամ») ներդրողների ժողովը հաստատեց E5P հիմնադրամի միջոցներից 5,000,000 եվրո (հինգ միլիոն եվրո) դրամաշնորհը Ծրագրի իրականացման համար և իրականացումը հանձնարարեց Բանկին:  
  
Սույն Համաձայնագրի («**Համաձայնագիր**») նպատակը Դրամաշնորհի պայմանները սահմանելն է՝ Ծրագրին ֆինանսապես և տեխնիկապես աջակցելու նպատակով:
- 1(3) Դրամաշնորհը տրամադրվում է Շահառուին:
- 1(4) Ծրագիրն իրականացնում է Երևանի քաղաքապետարանը («**Շահառու**»): Շահառուն պարտավորվում է երաշխավորել, որ Դրամաշնորհը կօգտագործվի Ծրագրի ֆինանսավորման համար՝ համաձայն սույն Համաձայնագրում սահմանված պայմանների:
- 1(5) Ընդհանուր գումարի արժեքը, որ Ծրագիրն իրավասում է տրամադրել համաֆինանսավորման Դրամաշնորհից կազմում է 15,000,000 եվրո (տասնհինգ միլիոն եվրո):
- 1(6) 2008թ-ի փետրվարի 29-ին Հայաստանի Հանրապետությունը և Բանկը ստորագրեցին Հայաստանի Հանրապետությունում Բանկի գործունեությունը կարգավորող Շրջանակային համաձայնագիր (Ժամանակ առ ժամանակ փոփոխվում է «**Շրջանակային համաձայնագիր**»), որը կշարունակի լիակատար ուժի մեջ լինել սույն Համաձայնագրի ամբողջ ժամկետի ընթացքում:
- 1(7) Սույն Համաձայնագրի կնքման ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է 1958 թ. Նյու Յորքի Արտերկրյա միջնորդ դատարանների ճանաչման և կատարման կոնվենցիայի մասնակից պետություն:
- 1(8) Անհատական տվյալների մշակումը կիրականացվի Բանկի կողմից՝ համապատասխան Եվրոպական միության օրենսդրությանը, այն է՝ անձանց ԵՄ կառույցների կողմից անհատական տվյալների մշակման և այդ տվյալների ազատ տեղաշարժի պաշտպանությունը:
- 1(9) Սույն Համաձայնագրի մեջ մտնելով յուրաքանչյուր Կողմ ընդունում է, որ Բանկը պարտավորված է հետևել պատժամիջոցների ցանկին (ինչպես սահմանված է ստորև) և, հետևաբար Բանկը ուղղակի կամ անուղղակ կերպով

չի կարող ֆինանսական միջոցներ տրամադրել պատժամիջոցների ներքո գտնվող անձի (ինչպես սահմանված է ստորև):

1(10) Պետք է հասկանալ, որ հողվածների, հավելվածների հղումները համապատասխանաբար հղումներ են սույն Համաձայնագրի հողվածներին, նկարագրություններին և հավելվածներին:

1(11) Սույն համաձայնագիրում՝

**«Ահաբեկչության ֆինանսավորում»** նշանակում է միջոցների տրամադրում կամ հավաքում, ցանկացած ուղղակի կամ անուղղակի կերպով, այն մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն կամ իմանալով, որ դրանք պետք է օգտագործվեն ամբողջությամբ կամ մասամբ՝ ահաբեկչության դեմ պայքարի մասին 2002 թվականի հունիսի 13-ի 2002/475 / ԵՀՀ որոշման 1-4-րդ հողվածներում նշված ցանկացած հանցագործության համար:

**«Փողերի լվաղում»** նշանակում է.

(ա) սեփականության փոխարկումը կամ փոխանցումը, գիտակցելով, որ այդպիսի գույքը ստացվում է հանցավոր գործունեության կամ այդ գործունեության մեջ մասնակցությունից, գույքի ապօրինի ծագման թաքցման կամ քողարկման կամ որևէ անձի օժանդակում, ով ներգրավված է նման գործողությունների մեջ՝ գործողությունների իրավական հետևանքներից խուսափելու նպատակով:

(բ) գույքի իրական աղբյուրի, գտնվելու վայրի, տնօրինման, տեղաշարժի, գույքի սեփականության իրավունքի թաքցնելը կամ քողարկումը, գիտակցելով, որ այդպիսի գույքը քրեական գործունեության կամ նմանատիպ գործունեությանը մասնակցելու արդյունք է:

(գ) գույք ձեռք բերելը, տիրապետելը կամ օգտագործելը, իմանալով, որ ստացման պահին այդպիսի գույքը ձեռք է բերվել քրեական գործունեությունից կամ այդ գործունեությանը մասնակցելուց, կամ

(դ) նախորդ կետերում նշված ցանկացած գործողություններին մասնակցումը, իրականացումը կամ իրականացման փորձը, օժանդակումը, ներգրավվումը, խորհրդատվություն տրամադրումը:

**«Արգելված վարք»** նշանակում է ցանկացած ահաբեկչության ֆինանսավորում, փողերի լվաղում կամ արգելված պրակտիկա:

**"Արգելված պրակտիկա"** նշանակում է յուրաքանչյուր՝

(a) **հարկադրական պրակտիկա.** վնասի հասցնում կամ սպառնում, անմիջական կամ անուղղակիորեն, վնասելու ցանկացած կողմի կամ կողմի սեփականությանը՝ անպատշաճ կերպով կողմի գործողության վրա ազդեցություն ունենալու նպատակով:

(b) Համապարփակ պրակտիկա, որը նշանակում է երկու կամ ավելի կողմերի միջև պայմանավորվածություն՝ ոչ պատշաճ կերպով նպատակին հասնելու համար, ներառյալ՝ այլ կողմի գործողությունների վրա անպատշաճ կերպով ազդեցություն գործադրելը:

- (c) **Կոռուպցիոն պրակտիկա** նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջարկել, տալ, ստանալ կամ հայցել, կողմի համար որևէ արժեք ներկայացնող իր՝ ցանկացած կողմի վրա ոչ պատշաճ կերպով ադեցություն ունենալով:
- (d) **Խարդախության պրակտիկա** նշանակում է ցանկացած գործողություն կամ բացթողում, այդ թվում, կեղծ տեղեկություն, որը գիտակցաբար կամ անխոհեմաբար մոլորեցնում է կամ փորձում է մոլորեցնել ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ պարտականություններից խուսափելու համար, կամ
- (e) **Կանխարգելիչ պրակտիկա** նշանակում է Դրամաշնորհի կամ Ծրագրի առնչությամբ հարուցված, կոլեկտիվ, կոռումպացված կամ կեղծարարության փորձի հետաքննության հետ կապված, 1) ապացույցի նյութը դիտավորյալ ոչնչացնելը, կեղծելը, փոփոխելը կամ թաքցնելը և (կամ) ցանկացած կողմին սպառնալը, ոտնձգելը կամ ահաբեկելը՝ կանխելու հետաքննությանն առնչվող հարցերի բացահայտումը կամ տեղեկության բացահայտումը կամ հետաքննության վարումը կամ (2) մտադրված նյութապես աուդիտի պայմանագրային իրավունքների կամ տեղեկատվության մատչելիության իրականացման խոչընդոտումը:

“ **Արգելված անձինք**» նշանակում է մեկ կամ մի քանի պատժամիջոցներում թվարկված և (կամ) պատժամիջոցների մեջ նշված ցանկացած անձ կամ անձիք:

“**Պատժամիջոցների ցուցակներ**” կամ “**Պատժամիջոցներ**” նշանակում է.

- (a) Ցանկացած տնտեսական, ֆինանսական և առևտրային սահմանափակող միջոցներ, սպառազինության արգելադրում, թողարկված Եվրոպական Միության կողմից՝ համաձայն Եվրոպական Միության պայմանագրի V վերնագրի 2-րդ գլխի, ինչպես նաև Եվրոպական Միության գործողությունների պայմանագրի Հոդված 215-ի, ներառյալ, բայց չսահմանափակվելով դրանցով, որոնք առկա են ԵՄ պաշտոնական կայքում՝ [http://eeas.europa.eu/cfsp/sanctions/consolidated/index\\_en.htm](http://eeas.europa.eu/cfsp/sanctions/consolidated/index_en.htm);
- [http://eeas.europa.eu/cfsp/sanctions/docs/measures\\_en.pdf](http://eeas.europa.eu/cfsp/sanctions/docs/measures_en.pdf) և / կամ <http://eur-lex.europa.eu/oj/direct-access.html>, փոփոխում, լրացվում են ժամանակ առ ժամանակ, կամ ցանկացած իրավահաջորդի էջում, կամ
- (b) Միավորված ազգերի կազմակերպության 41-րդ Հոդվածի VII կանոնադրությանը համապատասխան, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից տրված ցանկացած տնտեսական, ֆինանսական և սահմանափակման միջոցներ և զենքի արգելքներ. <http://www.un.org/en/sc/documents/resolutions/>, <https://www.un.org/sc/suborg/sites/www.un.org.sc.suborg/files/consolidated.pdf>, փոփոխում, լրացվում են ժամանակ առ ժամանակ, կամ ցանկացած իրավահաջորդի էջում:

## **Հոդված 2 – Սույն Համաձայնագրի իրականացման ժամանակահատված**

- 2(1) Սույն Համաձայնագրի իրականացման ժամկետը (**«Իրականացման ժամանակահատվածը»**) կմեկնարկի ուժի մեջ մտնելու պահից:
- 2(2) Սույն Համաձայնագրի իրականացման ժամկետը կլինի մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը կամ կերկարաձգվի E5P հիմնադրամի կողմից հաստատմամբ՝ Բանկի կողմից գրավոր տեղեկացմամբ Շահառուին (**«Ավարտի ամսաթիվը»**):

## **Հոդված 3 – Դրամաշնորհի գումարը**

- 3(1) Բանկը պարտավորվում է տրամադրել մինչև 5,000,000 եվրո (հինգ միլիոն եվրո) Շահառուին, E5P հիմնադրամից միջոցներ ստանալուց անմիջապես հետո, համաձայն Բանկի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի՝ որպես միջոցների կառավարիչ, միջև կնքված ֆինանսական համաձայնագրի՝ սույն Համաձայնագրի կնքման ամսաթվի կամ մոտ ամսաթվի դրությամբ:
- 3(2) Դրամաշնորհի վերջնական գումարը կսահմանվի հետևյալ կերպ.
- (a) Դրամաշնորհի գումարը չպետք է գերազանցի 3(1)Հոդվածով սահմանված առավելագույն չափը, եթե նույնիսկ փաստացի ծախսերը գերազանցում են Ծրագրի ընդհանուր արժեքը, ինչպես սահմանված է Հոդված 1(5)-ում, կամ
  - (b) Եթե ընդհանուր ներդրումային գումարը Ծրագրի ավարտման պահին ավելի քիչ է Հոդված1(5)- ում սահմանված Ծրագրի գնահատված ընդհանուր արժեքից, Դրամաշնորհը կարող է լինել համամասնորեն ներդրումներին:

## **Հոդված 4 – Դրամաշնորհի օգտագործում**

- 4(1) Շահառուն Դրամաշնորհը պետք է օգտագործի միայն Ծրագրի ֆինանսավորման նպատակով, ինչպես սահմանված է Հավելված 1-ում: Կասկածից խուսափելու համար Դրամաշնորհը չի կարող օգտագործվել հարկերի, տուրքերի և վճարների ֆինանսավորման համար, որոնք ծագել են կամ կապված են Ծրագրի իրականացման հետ: Ծրագրի համաֆինանսավորման աղբյուրներից յուրաքանչյուրի նկատմամբ համամասնությունները և գումարները սահմանված են Հավելված 1-ում և Շահառուն պետք է համապատասխանաբար ֆինանսավորի Ծրագիրը:
- 4(2) Կողմերը սույնով ընդունում և համաձայնում են, որ Դրամաշնորհի չափը, մինչև որ այն կհատկացվի Շահառուին E5P հիմնադրամի կողմից, կդրվի Բանկի կողմից բացված և սպասարկվող եվրոյով հաշվին (**«Դրամաշնորհային Հաշիվ»**): Շահառուն ընդունում է, որ Բանկը պարտավոր է (i) փոխանցել E5P Հիմնադրամի դրամաշնորհային հաշվին հաշվեգրված տոկոսների չափը մինչև դրանց հատկացումը (**«տոկոսագումար»**)՝ եթե դրական է ( «Դրական տոկոսագումար»), կամ ( ii) ցանկացած բացասական տոկոսի պարագայում՝ նվազեցման Դրամաշնորհի գումարից (**«բացասական տոկոսագումար»**):

Ցանկացած տոկոսագումար կկազմի Դրամաշնորհային հաշվի մի մաս: Ցանկացած կորուստ կամ ծախսեր, որ կառաջանան դրամաշնորհի հաշվին, այդ թվում, ցանկացած բացասական տոկոսագումարներ և որևէ կիրառելի բանկային վճարներ կամաված Դրամաշնորհի հաշվի սպասարկման հետ, կլինեն կորուստ կամ ծախսեր Դրամաշնորհի հաշվին: Բանկային վճարները կապված Դրամաշնորհի հաշիվների փոխանցումների, դրամաշնորհային հաշվին կհամարվեն իրավասու ծախսեր և կգանձվեն Դրամաշնորհից:

- 4(3) Շահառուն պետք է. (i) օգտագործի ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքը եվրոյի փոխակերպման համար, և (ii) իրականացնի փոխանակումը փոխհատուցման պահին:
- 4(4) Դրամաշնորհի հասույթը չի կարող օգտագործվել անձանց կամ կազմակերպությունների վճարման կամ ապրանքների ներմուծման համար, եթե այդ վճարումը կամ ներմուծումն արգելված է համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության VII գլխի, ընդունված Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի որոշմամբ կամ Եվրոպական Միության կողմից Պայմանագրի V վերնագրի 2-րդ գլխի համաձայն, ինչպես նաև համաձայն Եվրամիության գործողության մասին պայմանագրի 215-րդ հոդվածի: Այդպիսի արգելքներով ծագում ունեցող ապրանքներ և ծառայություններ առաջարկող անձինք կամ կազմակերպությունները կամ մատակարարները, իրավասու չեն ստանալ պայմանագրեր, որոնք ֆինանսավորվում են Դրամաշնորհի հասույթից:

#### **Հոդված 5 – Վճարման համաձայնագրեր**

- 5(1) Բանկը կփոխանցի Դրամաշնորհը Շահառուի հաշվին («Ծրագրի հաշիվ»), որի հաշիվը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պահվող Գանձապետարանի միասնական հաշվի առանձին ենթաբաժին, բաժանված է ցանկացած Շահառուի կողմից եվրոյով արտահայտված այլ ակտիվներից և որոնց հաշվին վճարումները կատարվելու են միայն Ծրագրի իրականացման նպատակով: Բանկին կտեղեկացվի սահմանված վճարման ժամկետից մինչև 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ՝ համաձայն 5 (3) (ա) հոդվածի: Վճարումները կատարվում են եվրոյով:

Եթե Շահառուն Ծրագրի իրականացման հետ կապված եվրոյից այլ փոխարժեքով պետք է վճարումներ կատարի, ապա Շահառուն կարող է գումարը փոխանակի միայն վճարման օրը:

Շահառուն սույնով հաստատում է, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ընթացիկ քաղաքականության համաձայն, Ծրագրի հաշվին չի կիրառվում դրական կամ բացասական տոկոսադրույք: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաշիվների նկատմամբ կիրառվող տոկոսադրույքների քաղաքականության փոփոխման դեպքում, Շահառուն պետք է կրի և բացասական տոկոսադրույքի բեռը և դրական տոկոսադրույքի դեպքում ստանա տոկոսադրույքից ստացված շահույթը:

- 5(2) Դրամաշնորհի վճարները պայմանավորված են 5(2) հոդվածում նշված

պայմանների իրականացմամբ.

(ա) Առաջին վճարման պայմանները.

(i) Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ, անգլերեն լեզվով իրավական կարծիքի առկայություն, մասնավորապես, սույն Համաձայնագրի պատշաճ կատարման, օրինականության, վավերականության, պարտադիր բնույթի և կիրառելիության (կասկածից խուսափելու համար, ներառյալ՝ իրավունքի և իրավասության դրույթները), ինչպես նաև Շահառուի կողմից պատշաճ հաստատման, վավերականության առկայության և կարողության և պատշաճ լիազորության վերաբերյալ: Նման կարծիքը հաստատվում է Շահառուի կողմից հաստատված համապատասխան փաստաթղթերի հիման վրա, որը հաստատում է սույն Պայմանագիրը, ներառյալ՝ (առկայության դեպքում) ապացույց, որ Շահառուի կողմից սույն Համաձայնագրի կատարումը պատշաճորեն հաստատվել է ավագանու խորհրդի կողմից և, որ յուրաքանչյուր անձ Շահառուի անունից Համաձայնագիր ստորագրելիս / պատշաճ կերպով լիազորված է դա անել (յուրաքանչյուր անձի կամ անձանց նմուշառման ստորագրության առկայություն),

(ii) Բանկի կողմից II հավելվածի տեսքով վճարման դիմումի ստացում մինչև վճարման համար սահմանված 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ կամ վճարման օրը: Դիմումին պետք է կցված լինի լիազորված անձի կամ անձանց (լիազորված են ստորագրել Շահառուի անունից) ստորագրության նմուշը:

(iii) Բանկի կողմից ամբողջ Դրամաշնորհային գումարի ստացում համաձայն 5 (3) (ա) հոդվածում սահմանված ժամկետի ավարտից առնվազն 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ կամ վճարման վերջնաժամկետի օրը: Դրամաշնորհը պետք է փոխանցվի ՎԶԵԲ-ի կողմից Բանկին՝ համաձայն ֆինանսավորման Համաձայնագրի:

(iv) Բանկը կանի առաջին հատկացումը համաձայն Ֆինանսական պայմանագրի:

(բ) Առաջին վճարմանը հաջորդող վճարները պայմանավորված են՝

(i) Բանկի կողմից II հավելվածի ձևաչափով վճարման հայտի ստացմամբ՝ Շահառուից 15 (տասնհինգ) աշխատանքային օր նախատեսված վճարման ամսաթվից առաջ կամ այդ օրը, որին կկցվի Շահառուի անունից ստորագրելու իրավասություն ունեցող անձի կամ անձանց լիազորությունների ապացույցը և այդ անձի կամ անձանց ստորագրության նմուշը, բացառությամբ, եթե ստորագրման և նմուշի ապացույցն արդեն տրամադրվել է համաձայն 5 (2)

հողվածի ( ա) (ii) –ի և չի փոփոխվել (կասկածից խուսափելու համար, եթե Շահառուն չի ներկայացնում ստորագրման հավաստագիր և ստորագրության նմուշ վճարման հայտի հետ միաժամանակ, ապա Բանկն իրավունք ունի ենթադրելու, որ ստորագրման և նախկինում ներկայացված ստորագրման նմուշի ապացույցները շարունակում են կիրառելի և վավեր լինել),

- (ii) փաստափղթերի ստացում Շայհառուի կողմից Բանկի համար ընդունելի ձևաչափով, որոնք կհաստատեն , որ (I) (բացառությամբ, եթե Բանկը չի հաստատում, որ դրա անհրաժեշտությունը չկա), Շահառուն Ծրագրի հետ կապված իրավասու ծախսեր է կրել համապատասխան 8-րդ հոդվածի, որն առնվազն հավասար է (i) նախորդ վճարման 70% (յոթանասուն տոկոս) վճարման գումարին և (ii) նախորդ բոլոր վճարումների գումարի 100% -ին (հարյուր), եթե առկա է, (II) փոխարժեքը, որը կիրառվել է յուրաքանչյուր նմանատիպ ծախսի համար տնտեսապես մատչելի է եղել Շահառուին՝ եվրոյի փոխանակման պահին, և
  - (iii) Բանկը բավարարված է, որ ԵՆԲ- ի վարկը չեղյալ չի համարվել և Շահառուն շարունակում է իրավասու լինել ստանալու կամ սպասրկելու վարկեր Ֆինանսական Պայմանագրի շրջանակներում:
- (գ) բոլոր վճարումները (ներառյալ առաջին և հաջորդող վճարումները) կիրականացվեն հետևյալ պայմանների իրականացման հիման վրա.
- (i) ֆինանսավորման նախագծի գնահատման դիմումի առկայություն ( միայն Բանկի կողմից հաստատված նախագծերը կարող են օգտվել ֆինանսավորումից),
  - (ii) Ֆինանսական պայմանագրի A2.2- ի ժամանակացույցով պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ առկայություն ` կապված նախագծի ֆինանսավորման հետ և ցանկացած այլ անհրաժեշտ տեղեկատվություն, որոնք հնարավորություն կտան Բանկին գնահատել համապատասխան նախագծի ֆինանսավորման իրավասությունը, և
  - (iii) հաստատում այն մասին, որ սույն Համաձայնագրով ոչ մի դեպք կամ հանգաման չեն հանդիսնում կամ չեն հանդիսանա դադարեցման առիթ՝ համաձայն 15-րդ հոդվածի:

Սույն Համաձայնագրի նպատակների համար «Աշխատանքային օր» նշանակում է օր (բացառությամբ շաբաթ կամ կիրակի), երբ Բանկը և առևտրային բանկերն աշխատում են Լյուքսեմբուրգում:

5(3) Դրամաշնորհի վճարումները կատարվում են հետևյալ կերպ.

- (a) Հոդված 5 (2)-ում նշված պայմանների կատարման դեպքում, Բանկը փոխանցում է 5 (1) հոդվածով սահմանված հաշվին, համապատասխան վճարման դիմումով սահմանված գումարը՝ դիմումը ստանալուց 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

(b) հավելվածի 1-ին համաձայն, յուրաքանչյուր վճարում, բացառությամբ վերջին վճարման, (I), դրամաշնորհային ծրագրերի կանխատեսումների 100 տոկոսը (100 տոկոսը) կկատարվի վճարման դիմումի ամսաթվից սկսած հաջորդ 12 (տասներկու) ամիսների համար, ինչպես նշված է 9 (1) հոդվածով սահմանված վերջին առաջընթացի զեկույցում, և (II) համապատասխան նախագծի վերջնական արժեքի հաստատումից հետո կունենա իր վերջնական գումարը, հաստատված միաժամանակյա հիմունքով, ԵՆԲ-ի կողմից Վարկի Ա մասի (ինչպես I- ի հավելվածով սահմանված) տրամադրման հետ:

(c) Դրամաշնորհի վերջին վճարումը կարող է ամենաուշը կատարվել ավարտի օրը:

5(4) Չխախտելով 15-րդ հոդվածը՝ սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր իրավունքը, Բանկը կարող է կասեցնել կամ չեղյալ հայտարարել վճարումը, եթե Շահառուն շարունակում է չկատարել սույն Համաձայնագրի համաձայն իրեն հատկացված որևէ դեր կամ սույն Համաձայնագրով կամ Ֆինանսական պայմանագիրով նախատեսված որևէ պարտավորություն Բանկից գրավոր ծանուցում ստանալուց 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

#### **Հոդված 6 – Երաշխիքներ և պարտավորություններ**

6 (1) Շահառուն Բանկին ներկայացնում և երաշխավորում է, որ,

(a) Շահառուի կողմից ներդրված ֆինանսական միջոցները չպետք է ունենան ապօրինի ծագում, այդ թվում, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված արտադրանքներ լինեն,

(b) ոչ Շահառուին, ոչ շահառուի տնօրեններին, ոչ էլ շահառուի անունից գործող անձիք կամ շահառուի ղեկավարության տակ գործող անձիք չեն կատարել և չեն կատարի՝

(i) Ծրագրի կամ Պայմանագրով նախատեսված ցանկացած գործողություն կապված որևէ արգելված վարքագիծ հետ , կամ

(ii) Ահաբեկչության ֆինանսավորման կամ փողերի լվացման հետ կապված ցանկացած անօրինական գործունեություն:

(c) Ծրագիրը (ներառյալ առանց սահմանափակումների բանակցությունները, Դրամաշնորհով ֆինանսավորվող կամ ֆինանսավորվող պայմանագրերի կատարումը), չի ներգրավվել կամ չի առաջացրել որևէ արգելված վարքագիծ:

6(2) Շահառուն պարտավորվում է՝

(a) ապահովել համապատասխան գրանցամատյանների, հաշվետվությունների պահպանում, որտեղ ամբողջական և ճիշդ գրառում կատարվի բոլոր ֆինանսական գործարքների, ակտիվների, ներառյալ Ծրագրի հետ կապված ծախսերի վերաբերյալ՝ համաձայն ՀՀ օրենքների ու կանոնակարգերի, և

- (b) պահպանել պայմանագրերի արձանագրություններ, որոնք ֆինանսավորվել են Դրամաշնորհի միջոցներից, ներառյալ՝ պայմանագրի պատճեն, ինչպես նաև առնվազն վերջին 6 տարիների գնումներին առնչվող փաստաթղթերը:

6(3) Շահառուն անհապաղ պետք է տեղեկացնի Բանկին հետևյալի մասին.

- (i) սույն Համաձայնագրի կնքման օրվանից հետո Ծրագրին առնչվող ցանկացած օրենքի, կանոնադրության, հուշագրի և միության կանոնադրության էական փոփոխություն վերաբերյալ,
- (ii) ցանկացած փաստի մասին, որը պարտավորեցնում ցանկացած ֆինանսական պարտքի կամ որևէ ԵՄ ֆինանսավորման համար կանխավճարի վճարում,
- (iii) ցանկացած փաստ կամ իրադարձություն, որի արդյունքում Շահառուի կառավարման մարմիններից ցանկացած անդամ համարվում է պատժամիջոցների ցուցակից անձ,
- (iv) ցանկացած փաստի կամ իրադարձության վերաբերյալ, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ սույն Համաձայնագրի շրջանակներում Շահառուի ցանկացած պարտավորության կատարման համար, կամ
- (iv) ցանկացած փաստի կամ իրողության վերաբերյալ, որ կհանգեցնի Շահառուի կառավարման մարմնում արգելված անձանց առկայությանը,
- (v) օրենքի թույլատրված սահմաններում, ցանկացած նյութական վարույթի, արբիտրաժային դատավարության, վարչական վարույթի կամ դատավարության, դատարանի, վարչակազմի կամ համանման հանրային մարմնի կողմից իրականացվող քննությունների վերաբերյալ, որտեղ առնչություն ունեն Շահառուն կամ նրա կառավարման մարմինները կամ նրա անդամները կամ վարչական մարմինները կապված արգելված վարքագծի հետ, որոնք իր գիտելիքների և համոզմունքների շրջանակներում համարվում են իրական, անխուսափելի:
- (vi) Ծրագրի հետ կապված որևէ արգելված վարքի վերաբերյալ իրական մեղադրանք կամ բողոք,
- (vii) փաստ կամ տեղեկատվությունն հաստատող կամ ողջամիտ ենթադրություն այն մասին, որ (ա) Ծրագրի հետ կապված որևէ արգելված վարքագիծ է տեղի ունեցել կամ (բ) Շահառուի բաժնեմասային կապիտալում կամ Ծրագրում ներդրված որևէ ֆինանսական ներդրում ունի անօրինական ծագում,
- (viii) Շահառուի կողմից սույն Համաձայնագրի 13 (2) հոդվածի համաձայն ստացված ցանկացած միջոց (ամբողջականության պարտավորություն)

6(4) Շահառուն պարտավորվում է.

- (a) պահպանել վարկի միջոցներով ֆինանսավորվող պայմանագրերի իսկական պատճենները և վճարումների վերաբերյալ ապացույցները,
- (b) ձեռնարկել գործողություններ, եթե Բանկը ողջամտորեն պահանջում է ուսումնասիրել և (կամ) դադարեցնել 6-րդ հոդվածում նկարագրված ցանկացած բնույթի ենթադրյալ կամ կասկածելի գործողություն,
- (c) Բանկին տեղեկացնում է միջոցների մասին, որ ձեռնարկվել են վնասների փոխհատուցում ստանալու համար այն անձանցից, ովքեր պատասխանատու են կորուստների համար,
- (d) նպաստել հետաքննությանը, որ Բանկը հնարավոր է իրականացնի նպանատիպ դեպքերի առնչությամբ,

6(4). Շահառուն սույն հոդվածի կապակցությամբ կրում է Բանկի կողմից կատարված բոլոր ծախսերը:

6(5) Այնքանով, որքանով Դրամաշնորհով ֆինանսավորվող ակտիվները, սարքավորումները և այլ ապրանքներ այլևս չեն պատկանում Շահառուին, Ավարտման ամսաթվով կամ սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում, որն առաջանում է ավելի վաղ, Շահառուն պետք է երաշխավորի, որ Ծրագրի իրականացման համար Դրամաշնորհի միջոցներից կահավորված կամ Դրամաշնորհի հասույթից ձեռք բերված սարքավորումները և այլ ապրանքները կփոխանցեն Բանկին: Եզրափակիչ զեկույցը պետք է ներկայացնի այս փոխանցման մանրամասները:

6(6) Ծրագրի իրականացման արդյունքում սեփականության, անվանման, արդյունաբերական և մտավոր սեփականության իրավունքը, ինչպես նաև հաշվետվությունները և դրանց վերաբերյալ այլ փաստաթղթեր, փախանցվում են Շահառուին, եթե այլ բան չեն համաձայնել Բանկը և Շահառուն: Շահառուն պարտավոր է ապահովել, որ Բանկից, ՎՋԵԲ-ից և Հիմնադրամի ներդրողներից ցանկացած անձ իրավունք ունենա անվճար օգտվել Ծրագրի իրականացման համար կազմված հաշվետվություններից և փաստաթղթերից, անկախ նրանից, թե ինչ ձևաչափով են դրանք, եթե դա չի խախտում գոյություն ունեցող արդյունաբերական և մտավոր սեփականության իրավունքները:

#### **Հոդված 7 – Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնում**

7(1) Շահառուն պետք է Ծրագրի համար գնի սարքավորումներ, անվտանգ ծառայություններ և աշխատանքներ՝ համաձայն գնումների ձեռնարկում Բանկի կողմից ընդունելի քաղաքականության նկարագրության:

7(2) Բանկը կարող է սահմանել մրցութային գնահատման անցկացման վայրը, ընթացակարգը, ում պետք է ներկայացվեն հայտեր և ինչպես պետք է դրանք պահվեն: Բանկը իրավասու է գնահատման ընթացքում անկախ դիտորդի ներկայություն ապահովել:

7(3) Շահառուն խելամիտ միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու հնարավոր մրցույթի մասնակիցների բացառումը դրամաշնորհի միջոցներով

ֆինանսավորվող գնումներին կամ շնորհման ընթացակարգերին, եթե՝

- (a) սնանկ են կամ լուծարվում են, պայմանավորվածություն են ունեցել պարտատերերի հետ, դադարեցրել են գործարար գործունեությունը, ենթակա են վարույթի կամ նման իրավիճակներում ազգային օրենսդրությամբ կամ կարգով նախատեսված ընթացակարգում,
- (b) մեղավոր են ճանաչվել իրենց կատարած աշխատանքի կամ արգելված վարքի հետ կապված հանցագործության համար,
- (c) մեղավոր են տեղեկատվության ոչ ամբողջական տրամադրելու հարցում, որպես մասնակցության կարգի պայման, կամ չեն տրամադրում այդ տեղեկատվությունը, կամ
- (d) ենթակա են շահերի բախման, ինչպես սահմանված է 12 (2) հոդվածում, կամ
- (e) եթե արգելվում է Բանկի Գնումների ուղեցույցով:

7(4) Վերը նշված դրույթները չկատարելու դեպքում համապատասխան ծախսերը չեն կարող սույն Համաձայնագրով ֆինանսավորվել:

#### **Հոդված 8 – Իրավասու ծախսեր**

8(1) Սույն Համաձայնագրով նախատեսված Դամաշնորհի վճարման համար իրավասու ծախսերը համարվում են այն ծախսերը, որ

- (a) անհրաժեշտ են Ծրագրի իրականացման համար, սահմանված սույն Համաձայնագրով, ապահովելու պատշաճ ֆինանսական գործընթացներ, մասնավորապես գնի և որակի ծախսարդյունավետության հարաբերակցությանը,
- (b) իրականում կատարվել են Ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման ամսաթվով և իրականացման ժամանակահատվածում՝ անկախ Բանկի կողմից փաստացի վճարման ժամանակահատվածից, և
- (c) հաշվառվում են Շահառուի հաշիվներում, ճանաչելի են, ունեն ապացույցների բնօրինակները (ինչպես օրինակ՝ էլեկտրոնային եղանակով), և ստուգելի են 10-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Կասկածից խուսափելու համար, Ծրագրի իրականացման հետ կապված արտաքին ծախսերը, ինչպիսի օրինակ՝ աուդիտը, համարվում են իրավասու ծախսեր և վճարվում են Շահառուի կողմից: Շահառուն կարող է այդ արտաքին ծախսերը վճարել Դամաշնորհի միջոցներից:

8(2) Հետևյալ ծախսերը համարվում են իրավասու.

- (a) Պարտքեր և դրույթներ ապագա հնարավոր կորուստների կամ պարտքերի վերաբերյալ,
- (b) Սպասարկման և այլ գործառնական ծախսեր,
- (c) Շահառուի կողմից ցանկացած երրորդ կողմին պատկանող տոկոսադրույթներ և շինարարության ընթացքում տոկոսներ,

- (d) այլ աղբյուրներից ֆինանսավորվող իրեր,
- (e) երկրորդային ակտիվների ձեռքբերում,
- (f) հողի և անշարժ գույքի ձեռքբերում,
- (g) չգ եներացվող հանրային ռեսուրսների օգտագործման լիցենզիայի ձեռքբերում (օրինակ՝ հեռահաղորդակցության լիցենզիա), արտոնագրեր, ապրանքանիշեր և ապրանքային նշաններ,
- (h) արժույթային փոխարժեքի կորուստները և զուտ ֆինանսական ծախսեր, կամ
- (i) Շահառուից գանձված ԱԱՀ-ն, հարկեր, տուրքեր (ներառյալ մաքսային տուրքերը) ՀՀ-ի տարածքում կամ այլ տեղ:

### **Հոդված 9 – Հաշվետվություն**

- 9(1) Շահառուն Բանկին կտրամադրի ապրանքների ձեռքբերման և հաշիվ-ապրանքագրերի վճարման վերաբերյալ ապացույցներ՝ III հավելվածի «Դրամաշնորհի ծախսերի հիմնավորման» ձևով. կիսամյակային, յուրաքանչյուրը մարտի 31-ին և սեպտեմբերի 30-ին՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսված:
- 9(2) Շահառուն, առանց հապաղելու Բանկին տեղեկացնում է ցանկացած հանգամանք, որը կարող է խոչընդոտել Ծրագրի իրականացմանը կամ հետաձգել Ծրագրի իրականացումը: Շահառուն պարբերաբար, առնվազն կիսամյակը մեկ, Բանկին տեղեկացնում է Ծրագրի իրականացման վերաբերյալ՝ համաձայն ֆինանսական պայմանագրի շրջանակներում հաշվետվության պահանջի:
- 9(3) Շահառուն յուրաքանչյուր տարի Բանկին ներկայացնում է տարեկան հաշվետվություն, մինչև փետրվարի 14-ը, սկսած ուժի մտնելու օրվանից՝ սույն Համաձայնագրի IV հավելվածում ներկայացված ձևով, ներառյալ աուդիտի ենթարկվող ֆինանսական հաշվետվությունները, որը ծածկում է նախորդ օրացուցային տարին (« Իրականացման տարեկան հաշվետվություն»):
- 9(4) Ավարտման ամսաթվի 5 (հինգ) ամիսների ընթացքում Շահառուն Բանկին ներկայացնում է Ծրագրի իրականացման և Դրամաշնորհի օգտագործման վերաբերյալ վերջնական զեկույց («Վերջնական զեկույց»): Եզրափակիչ զեկույցը պատրաստվում է սույն Համաձայնագրի 4-րդ Հավելվածում սահմանված ձևաչափով և բովանդակությամբ և ներառում է ամբողջ իրականացման ժամկետը:
- 9(5) Դրամաշնորհի առաջին վճարումից հետո Շահառուն Բանկին ներկայացնում է.
  - (1) աուդիտ չանցած կիսամյակային ֆինանսական հաշվետվություն, ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա հուլիսի 15-ը, հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում:
  - (2) տարեկան ֆինանսական աուդիտի ենթարկվող ֆինանսական հաշվետվություններ, նախորդ ֆինանսական տարվա համար, ոչ ուշ,

քան յուրաքանչյուր տարվա փետրվարի 14-ը, և

- (2) Ծրագրի Հաշվի վերջնական աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները Ծրագրի ավարտի ամսաթվից հինգ (5) ամսվա ընթացքում, որը նախատեսում է տարվա ավարտից մինչև Ծրագրի հաշվի վերջին տարեկան աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները մինչև ավարտի ամսաթիվը:

Ծրագրի հաշվի ֆինանսական հաշվետվությունները պետք է պարունակեն այն տեղեկությունները, որոնք սահմանված են սույն Համաձայնագրի V հավելվածում, ներկայացված ֆինանսական հաշվետվության ձևաթղթում: Կասկածից խուսափելու համար աուդիտի հետ կապված արտաքին ծախսերը Շահառուին կվճարվեն Դրամաշնորհի միջոցներից և կդիտարկվեն որպես Դրամաշնորհի շրջանակներում իրավասու ծախսեր: 9(6) Բացի վերը նշված հաշվետվություններից, Բանկը ցանկացած ժամանակ կարող է գրավոր տեղեկացնել, որ Շահառուից պահանջում է Ծրագրի իրականացման հետ կապված լրացուցիչ տեղեկատվություն (օրինակ՝ առաջխաղացման և իրավիճակի վերաբերյալ հաշվետվություններ, հրապարակումներ, մամլո հաղորդագրություններ և այլն): Շահառուն Բանկի պահանջով ապահովում է թարմացված տեղեկություններ առանց անհարկի հետաձգման և ցանկացած դեպքում, ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում: Շահառուն պետք է ողջամիտ ջանքեր գործադրի, որպեսզի երրորդ անձանց նկատմամբ ստանձնած գաղտնիության պարտավորությունների բացահայտելն, Բանկին տեղեկատվություն տրամադրելը սույն Համաձայնագրի շրջանակներում, վերապահվի Շահառուին: Այն դեպքում, երբ Շահառուը չի կարող ապահովել Բանկի կողմից պահանջվող տեղեկությունները գաղտնիության սկզբունքով, չնայած այդ տեղեկությունները տրամադրելու համար անհրաժեշտ թույլտվությունները ձեռք բերելու համար ձեռնարկվող ջանքերին, ապա Շահառուն անհապաղ տեղեկացնում է Բանկին, և Կողմերը խորհրդակցում են լուծման շուրջ:

#### **Հոդված 10 – Այցելություններ, մուտքի իրավունք և հետաքննություն**

10(1) Շահառուի պետք է թույլ տա Բանկի կողմից նշանակված անձանց, ինչպես նաև E5P հիմնադրամի ներդրողների կողմից նշանակված անձանց (ինչպես սահմանված է E5P հիմնադրամի կանոններում), ինչպես նաև ԵՄ իրավասու մարմինների կողմից նշանակված անձանց, այդ թվում, Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական հակակոռուպցիոն կենտրոնին՝

- (i) այցելել Ծրագրի կազմում ընդգրկված տարածքներ, գործարաններ, ստուգումներ և գնահատման առաքելություններ իրականացնելու՝ կապված սույն Համաձայնագրի նպատակների և Ծրագրի ֆինանսավորման հետ,
- (ii) Շահառուի հետ հարցազրույցներ անցկացնել և չխոչընդոտել Ծրագրի կողմից ներգրավված կամ ազդեցություն կրած որևէ այլ անձի հետ շփումները, և

- (iii) Վերանայել Շահառուի մատյաններն ու արձանագրությունները, Ծրագրի իրականացման հետ կապված և օրենքով թույլատրված չափով, վերցնել համապատասխան փաստաթղթերի պատճենները:

10(2) Շահառուն նպաստում է Բանկի և Եվրոպական միության այլ իրավասու մարմինների կամ մարմինների կողմից քննության առարկա հանդիսացող արգելված վարքի ցանկացած կասկածի կամ կասկածի առթիվ հետաքննություն իրականացնելուն և Բանկին տրամադրում է օգնություն այս հոդվածում նկարագրված նպատակների համար:

10(3) Շահառուն ընդունում է, որ

- (i) Բանկը կարող է պարտավորված լինի հայտնել Շահառուին և Ծրագրին վերաբերող տեղեկատվություն Եվրոպական Միության ցանկացած իրավասու մարմիններին, այդ թվում, Եվրոպական աուդիտորների դատարանին, Եվրոպական հանձնաժողովին և Եվրոպական հակակոռուպցիոն կենտրոնին կամ E5P հիմնադրամի Ներդրողներին (ինչպես սահմանված է E5P հիմնադրամի կանոններում), ինչպես որ պահանջվում է Եվրոպական Միության օրենքի պարտականությունների կատարմամբ, և
- (ii) ՎԶԵԲ-ը և Բանկը որևէ կերպ պատասխանատվություն չեն կրում Շահառուի ուղղակի կամ անուղղակի ծախսերի, վնասի կամ կորստի համար, որոնք առաջանում են E5P հիմնադրամի ներդրողների կողմից կատարված ստուգումների և գնահատումների արդյունքում:

### **Հոդված 11 - Դրամաշնորհի մարումը**

11(1) Եթե սույն Համաձայնագիրը դադարեցվել է, չիրականացվել կամ չիրականացվել պատշաճ կերպով, չխախտելով 15-րդ հոդվածի համաձայն սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր իրավունքը, Բանկը կարող է պահանջել Դրամաշնորհի ընդհանուր գումարի մարում կամ կրճատել Դրամաշնորհը՝ համադրելով ծրագրի իրական իրականացմանը:

11(2) Եթե Ծրագիրը չի ավարտվում իրականացման ժամանակահատվածում, ապա յուրաքանչյուր մնացորդային գումարներ փոխհատուցվում է Բանկին:

11(3) Այն դեպքում, երբ Դրամաշնորհը չի օգտագործել (i) սույն ընթացակարգերին և պայմաններին համապատասխան, և (ii) I հավելվածով սահմանված Ծրագրի բնութագրերի, ապա Բանկը իրավունք կունենա վերականգնել Շահառուի կողմից դրամաշնորհից Ծրագրում սխալ վճարված կամ սխալ օգտագործված միջոցների ծախսերի գումարը:

11(5) Ցանկացած չօգտագործված, վերականգնված կամ վերադարձված դրամաշնորհի գումարներ վերադարձվում են Շահառուի կողմից Բանկին 30 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում: Շահառուն պետք է վերադարձնի սույն հոդվածի համաձայն ցանկացած դրամաշնորհային գումար:

11(6) Շահառուի կողմից Բանկին վերադարձված, փոխհատուցվող, Բանկի կողմից վերականգնված ցանկացած Դրամաշնորհի գումար պետք է լինի եվրոյով՝

համարժեք Բանկի կողմից շահառուին փոխանցված եվրոյով գումարին: Կասկածից խուսափելու համար, եվրոյով նման դրամաշնորհի ցանկացած գումարի կորուստը վերաբերում է Բանկին և բացառապես պետք է վճարվի Շահառուի կողմից:

#### **Հոդված 12 – Շահերի բախում**

12(1) Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ խուսափելու շահերի բախումից և անհապաղ տեղեկացնում մյուս Կողմերին ցանկացած իրավիճակի կամ նման իրավիճակի հանգեցնող որևէ դեպքի մասին:

12(2) Շահերի բախում առկա կլինի, եթե Ծրագրի հետ կապված ցանկացած պատճառով ցանկացած անձի գործառույթների անկողմնակալ և օբյեկտիվ գործողությունները վտանգի տակ լինեն:

#### **Հոդված 13 – Տեսանելիության, թափանցիկության, ազատության պարտավորություն**

13 (1) Շահառուն պետք է ներառի իր բոլոր գովազդային նյութերում, որոնք վերաբերում են Ծրագրի շրջանակներում ներգրավված գործունեությանը, հղում, որ դրանք իրականացվում են Բանկի կողմից և ներառի Բանկի լոգոն և նշի E5P հիմնադրամի առանձին ներդրողներին: Ծրագրի իրականացման վերաբերյալ հատուկ հաշվետվությունները, որոնք պատրաստվել են դրամաշնորհի միջոցներով Ծրագրի խորհրդատուների կողմից, պետք է ներառեն հետևյալը. «Այս փաստաթուղթը մշակվել է Արևելյան Եվրոպայի էներգաախնայողության և բնապահպանական գործընկերության (E5P) Տարածաշրջանային ֆոնդի ֆինանսական օժանդակությամբ): Այստեղ ներկայացված հայացքներ (հեղինակի անունը) և, հետևաբար, ոչ մի կերպ չեն կարող համարվել հիմնադրամի կամ ՎԶԵԲ-ի ներդրողների պաշտոնական կարծիքը»:

13 (2) Անաչառության պարտավորվածություն

(a) Արգելված վարք.

(i) Շահառուն կապահովի, որ Ծրագրի իրականացման համար Շահառուի կողմից ներգրավված կապալառուները Ծրագրի իրականացման ներգրավված չլինեն (կամ լիազորված կամ որևէ ստորաբաժանման ներկայացուցիչ) որևէ արգելված վարքագծի մեջ՝ կապված Ծրագրի ցանկացած մրցույթի ընթացակարգի կամ Համաձայնագրի կամ Ծրագրի փաստաթղթերում նախատեսված ցանկացած գործարքի հետ:

(ii) Շահառուն պարտավորվում է ձեռնարկել այնպիսի գործողություն, Բանկի կողմից ողջամտորեն պահանջված, հետաքննելու կամ դադարեցնելու Ծրագրի հետ կապված որևէ արգելված վարք:

(iii) Շահառուն պարտավոր է ապահովել, որ իր կողմից կնքված և ուժի մեջ մտած պայմանագրերը, որոնք վճարվում են Դրամաշնորհի

միջոցներից, ներառում են անհրաժեշտ դրույթներ, որպեսզի Շահառուն կարողանա ուսումնասիրել կամ դադարեցնել Ծրագրի հետ կապված որևէ արգելված վարքի ցանկացած ենթադրյալ կամ կասկածելի դեպք:

- (iv) Շահառուն կկասեցնի և կդադարեցնի դրամաշնորհային միջոցների վճարումները կապալառուներին, որոնք ներգրավված են եղել արգելված վարքագծի կամ ապօրինի գործողությունների մեջ և կձեռնարկի բոլոր խելամիտ միջոցները Դրամաշնորհի բոլոր միջոցների ծածկման համար:

(b) Պատժամիջոցներ.

Ոչ Շահառուն և ոչ էլ Շահառուի կողմից Ծրագրի իրականացման համար ներգրավված կապալառուները չպետք է՝

- (i) հաստատեն գործարար հարաբերություններ պատժամիջոցների տակ գտնվող անձի հետ, կամ
- (ii) տրամադրեն կամ ի օգուտ օգտագործեն որևէ միջոց ուղղակի կամ անուղղակի կերպով պատժամիջոցների տակ գտնվող անձի հետ:

(c) Կառավարում.

Շահառուն պարտավորվում և ապահովում է, որ Ծրագրի իրականացման համար Շահառուի կողմից ողջամիտ ժամանակահատվածում կիրականացվեն համապատասխան պատշաճ միջոցառումներ (կիրառելի) լիազորված գործակալների և Շահառուի ներկայացուցիչների նկատմամբ, ովքեր՝

- (i) ընկնում են պատժամիջոցների տակ, կամ
- (ii) իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում արգելված վարքի դրսևորման հետևանքով ենթարկվում են դատարանի վերջնական և անվիճելի որոշման,

որպեսզի ապահովվի, որ նման անձանց գործունեությունը կդադարեցվի, կհեռացվեն կամ Ծրագրին առնչվող որևէ գործառնություն կբացառվեն:

**Հոդված 14 – Համաձայնագրի կասեցում**

14(1) Բանկը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի ամբողջ կամ մի մասը, եթե խոչընդոտվում է Ծրագրի արդյունավետ և անվտանգ իրականացում, որի մասին անհապաղ տեղեկացնում է Շահառուին: Ցանկացած նման կասեցում պետք է շարունակվի, մինչ Բանկը դադարի կասեցումը կամ դադարեցնի Համաձայնագիրը: Եթե սույն Համաձայնագիրը չեղյալ է համարվում, ապա Բանկը պետք է ձգտի նվազագույնի հասցնել կասեցման տևողությունը և կարող է վերսկսել Ծրագրի իրականացումը, երբ պայմանները թույլ տան, որի մասին համապատասխանաբար տեղեկացնում են Շահառուին:

14(2) Իրականացման ժամանակաշրջանը ավտոմատ կերպով երկարաձգվում է կասեցման տևողության համարժեք ժամանակի չափով: Սա չի խոչընդոտում

սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխությանը, որը կարող է անհրաժեշտ լինել Ծրագիրը նոր պայմաններին հարմարեցնելուն:

14(3) Բանկի կողմից սույն հոդվածի համաձայն դադարեցման կամ կասեցման դեպքում որևէ փոխհատուցում չի վճարվելու:

#### **Հոդված 15 – Համաձայնագրի դադարեցում**

15(1) Սույն Համաձայնագիրը ավտոմատ կերպով դադարեցվում է, եթե այն չի հաստատվել պատշաճ կերպով շահառուի ավագանու խորհրդի կողմից՝ ստորագրման օրվանից 24 (քսանչորս) ամսվա ընթացքում:

15(2) Եթե ցանկացած ժամանակ ցանկացած Կողմ գտնում է, որ սույն Համաձայնագրի նպատակները այլևս չեն կարող արդյունավետ կամ համապատասխանորեն իրականացվել, ապա նա պետք է խորհրդակցի մյուս Կողմի հետ: Որոշման մասին համաձայնության չգալու դեպքում, ցանկացած Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ 2 (երկու) ամսում գրավոր ծանուցում ներկայացնելով: Այս դեպքում Շահառուն իրավունք ունի Բանկին դրամաշնորհից վճարել միայն Ծրագրի մի մասի իրականացման համար:

15(3) Չվնասելով սույն Համաձայնագրի իրավունքներն ու պարտականությունները, ցանկացած Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը, եթե Կողմերից որևէ մեկը չի կատարում սույն Համաձայնագրի պայմանները, ներառյալ հավելվածները, և դրանց չկատարումը շարունակվում է գրավոր ծանուցումից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

15(4) Եթե սույն Համաձայնագրի ժամկետների շրջանակում Դրամաշնորհի ցանկացած մաս ենթակա է վճարման, Շահառուն Դրամաշնորհն ամբողջությամբ կամ դրա մի մասը վճարում է 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կամ մեկ այլ ամսաթվի, որի շուրջ կհամաձայնվեն Կողմերը՝ հետևյալ պայմանների համաձայն Բանկի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա:

15(5) Բանկը կարող է դադարեցնել սույն պայմանագիրը 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցմամբ և կարող է պահանջել դրամաշնորհի ամբողջական կամ մասնակի մարում, եթե՝

(a) Շահառուն Բանկին չի տեղեկացրել Ծրագրի համար բացասական հետևանքների և դրանց սպասվող արդյունքների հետ կապված շահերի բախման պատճառով առաջացող ցանկացած իրավիճակի մասին,

(b) Շահառուն փոխանցել կամ հանձնել է սույն Համաձայնագիրը կամ նրան կցված գումարները երրորդ կողմին առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության,

(c) Եթե Շահառուի կողմից կամ նրա անունից փոխանցված ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ կամ սույն Համաձայնագրում Շահառուի կողմից արված կամ դիտարկվող ցանկացած հայտարարություն կամ սույն Համաձայնագրի բանակցությունների հետ կապված որևէ տեղեկություն սխալ կամ ապակողմնորոշիչ է,

- (d) Շահառուն տրամադրում է հաշվետվություններ Դրամաշնորհի ստանալու համար, որոնք չեն արտացոլում իրականությունը,
- (e) Շահառուն իրականացնում է կանխամտածված ֆինանսական խախտումներ,
- (f) Շահառուն ենթարկվում է իրավական, ֆինանսական, տեխնիկական կամ կազմակերպական փոփոխությունների, որոնք կարող են զգալիորեն ազդել սույն Համաձայնագրի վրա,
- (g) Շահառուն ծախսողում է որևէ պարտավորության իրականացման հարցում Բանկի կողմից տրամադրված ցանկացած վարկի կամ ֆինանսական գործիքի տեսանկյունից կամ Բանկին կամ Եվրոպական Միությանը (ներառյալ Շահառուի կողմից՝ ԵՆԲ վարկին առնչվող կնքված ցանկացած պայամանագիր),
- (h) Եթե Շահառուն չի կատարում սույն Համաձայնագրով նախատեսված որևէ պարտավորություն:

15(6) Եթե Շահառուին չի հաջողվում սահմանված ժամկետում վճարել Դրամաշնորհին ամբողջությամբ կամ մասնակի, վճարման ենթական գումարը կկրի տոկոսներ՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման հիմնական գործառնությունների վրա կիրառվող տոկոսադրույքով, ինչպես հրապարակված է գումարի վճարման ենթակա ամսվա առաջին օրը Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրի C շարքում՝ ավելացված երեքուկես ամբողջ տոկոսային միավորով: Տոկոսը պետք է վճարվի վճարման համար հատկացված ժամանակահատվածի ավարտից մինչև փաստացի վճարման օրվա ժամանակահատվածի համար: Ցանկացած մասնակի վճարում առաջին հերթին կմարի տոկոսները:

15(7) Բանկի կողմից վճարված գումարների մարման հետևանքով առաջացած բանկային վճարներն ամբողջությամբ մարվում են Շահառուի կողմից:

15(8) Եթե սույն Համաձայնագիրը վաղաժամկետ դադարեցվում է, ապա սույն Պայմանագրով սահմանված Բանկի վճարման պարտավորությունները դադարում են «ավարտի ամսաթվով», որը տեղի է ունենալու Իրացման ժամկետի ավարտից հետո 18 (տասնութ) ամիս հետո: Բանկը շահառուին տեղեկացնում է վերջնական ժամկետի հետաձգման մասին: Բանկը պարտավոր է ավարտի ժամկետը հետաձգել, որպեսզի կարողանա իր վճարային պարտավորությունները կատարել, բոլոր այն դեպքերում, երբ Շահառուն վճարման պահանջը ներկայացրել է սույն Համաձայնագրի կամ վեճի դեպքում՝ մինչև վեճերի լուծման ընթացակարգի ավարտն ինչպես նշված է Հոդված 17-ում:

## **Հոդված 16 - Փոփոխություններ**

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կողմերի միջև գրավոր համաձայնությամբ: Կողմերը գիտակցում են, որ սույն Համաձայնագրի փոփոխությունները ուժի մեջ կմտնեն օրենքով պահանջվող բոլոր անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտից հետո:

## **Հոդված 17 - Կառավարող օրենք**

Սույն Համաձայնագիրը և դրանից բխող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն կկառավարվի Լյուքսեմբուրգի օրենքների համաձայն:

## **Հոդված 18 - Վեճերի լուծում**

18(1) Սույն 18-րդ Հոդվածը կղեկավարվի հոլանդական օրենսդրությամբ:

18(2) Սույն Համաձայնագրից բխող, դրան առնչվող կամ դրա հետ որևէ կապ ունեցող ցանկացած վեճ, հայց, տարբերություն կամ հակասություն, ներառյալ ցանկացած վեճ դրա առկայության, վավերության, մեկնաբանության, կատարման, խախտման կամ դադարեցման, կամ դրա անվավերության հետևանքները, ինչպես նաև դրանից բխող կամ դրա հետ կապ ունեցող ոչ պայմանագրային պարտավորություններին առնչվող ցանկացած վեճ (սույն Հոդվածի նպատակների համար՝ Վեճ) պետք է դիտարկվեն և վերջնականապես լուծվեն արբիտրաժի միջոցով՝ Միջազգային առևտրային պալատի Արբիտրաժային կանոնների շրջանակում (սույն Հոդվածի նպատակների համար՝ «կանոններ»):

18(3) Կանոնները սույն Հոդվածում ներառված են հղման տեսքով, իսկ սույն Հոդվածում կիրառվող մեծատառերով գրված տերմինները, որոնք այլ կերպ սահմանված չեն սույն Համաձայնագրում, ունեն Կանոններում սահմանված իմաստները:

18(4) Արբիտրների թիվը պետք է լինի երեքը: Կողմերի կողմից առաջադրված արբիտրները համատեղորեն առաջադրում են երրորդ արբիտրին, ով ենթակա է հաստատման Միջազգային միջնորդ դատարանի կողմից և հանդես կգա որպես արբիտրաժային դատարանի նախագահ:

18(5) Արբիտրաժի նստավայրը կամ իրավաբանական վայրը Ամստերդամն է:

18(6) Արբիտրաժային վարույթում օգտագործվող լեզուն անգլերենն է: Դիմումների հետ կապված բոլոր ներկայացված փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն կամ, եթե առկա է մեկ այլ լեզվով, ապա պետք է ուղեկցվի անգլերեն թարգմանությամբ: Յուրաքանչյուր արբիտր պետք է ունենա անգլիական օրենքի որակավորում և ունենա 10 տարվա աշխատանքային փորձ:

18(7) Արբիտրաժի ցանկացած խնդրի վերաբերյալ քարտուղարության ծառայությունը, որը կատարվել է սույն հոդվածի համաձայն՝ պետք է լինի սույն Համաձայնագրի 19-րդ հոդվածի (հողորդակցություն) ծանուցման մեջ նշված հասցեի և այդ հոդվածում նախատեսված կարգով:

18(8) Եթե հայցերի կառավարման համաժողովի ընթացքում Միջնորդ դատարանի համար պարզ դառնա, որ արբիտրաժում քննվող որևէ կամ բոլոր դեպքերի մասով հաջողության հասնելու հեռանկար չկա կամ կարող է չլինել, կամ միջնորդ դատարան ներկայացված որևէ կամ բոլոր հայցերի հաջող պաշտպանության հեռանկար չկա, ապա Միջնորդ դատարանը կարող է այդպիսի հայց(եր)ը լուծել ամփոփ ընթացակարգով, եթե վերջինս որոշի, որ դա

բխում է արդարադատության շահերից: Կողմերը կարող են պնդումներ ներկայացնել, թե արդյոք դա պատշաճ ընթացակարգ է: Այն դեպքում, երբ որոշվում է կիրառել ամփոփ ընթացակարգը, միջնորդ դատարանն այդպիսի հայց(եր)ի մասով որոշում պետք է կայացնի հնարավոր սեղմ ժամկետներում: Միջնորդ դատարանը կարող է պահանջել հետազայում կարճ գրավոր ներկայացումներ այդպիսի հայտ(եր)ի հետ կապված և անցկացնել միայն բանավոր լսում՝ վճիռ կայացնելու համար, եթե գտնում է, որ դրա անհրաժեշտությունը կա: Միջնորդ դատարանը կարող է որոշել իր վճռի մեջ ներառել միայն ամփոփ ընթացակարգով արբիտրաժում առաջ քաշված հատուկ հայցեր:

18(9) Վերոնշյալ Հոդված 18-ում ոչինչ չի կարող խոչընդոտել, չեղարկել կամ ինչ-որ կերպ խախտել Բանկի արտոնությունները և անձեռնմխելիությունը ինչպես սահմանված է ԵՄ պայմանագրերում, ներառելով, առանց սահմանափակումների, նրա արխիվների անձեռնմխելիությունը և այս առումով Բանկը բացահայտորեն վերապահել է իր իրավունքները:

### **Հոդված 19 - Հաղորդակցություն**

19(1) Սույն Համաձայնագրի Կողմերից որևէ մեկին հասցեագրված ծանուցումներն ու հաղորդակցությունները պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեներով կամ ֆաքսիմիլային համարով կամ այն հասցեով կամ ֆաքսիմիլային համարով, որ կողմը նախօրոք գրավոր կերպով կձանուցի մյուս կողմին:

Բանկի տվյալները

Եվրոպական ներդրումային բանկ

Հասցեատեր՝ Հարևան երկրների վարչություն, ծ

Հանրային հատվածի արևելքի բաժին

98-100 բուլվար Քոնրադ Ադենոր L-2950 Լյուքսեմբուրգ

Ֆաքսիմիլային համար՝ +352 4379 56331

Շահառուի տվյալները

Երևանի

քաղաքապետարան

Հասցեատեր՝ Երևանի քաղաքապետի տեղակալ ֆինանսական գծով (Համաձայնագրի ստորագրման պահին պրն. Վահե Նիկոյան)

Հասցե՝ ՀՀ, Երևան- 0015, Արգիշտի 2փ.

Ֆաքս՝ +37 411514159

19(2) Սույն Համաձայնագրի շրջանակներում ներկայացված ցանկացած ծանուցում կամ հաղորդակցություն պետք է լինի գրավոր տեսքով:

Այն ծանուցումները և այլ հաղորդակցությունները, որոնց համար սույն Համաձայնագրի շրջանակներում սահմանված է կոնկրետ ժամկետներ, կամ որոնք իրենցով հասցեատիրոջ վրա կոնկրետ ժամկետներ են սահմանում,

պետք է տրամադրվեն առձեռն, պատվիրված նամակի կամ ֆաքսիմիլի տեսքով: Առաքման, պատվիրման կամ, ըստ դեպքի փոխանցումը ստանալու հաստատված ամսաթիվը հանդիսանում են որոշիչ ժամանակահատվածի սահմանման համար:

Այլ ծանուցումները և հաղորդակցությունները պետք է հանձնվեն առձեռն, պատվիրված նամակով կամ ֆաքսիմիլի տեսքով կամ, կողմերի միջև գրավոր համաձայնությամբ՝ էլեկտրոնային նամակով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

Առանց վերոնշյալ պարբերությունների համաձայն ֆաքսիմիլի միջոցով ներկայացված ցանկացած ծանուցման վավերության վրա ազդելու՝ ֆաքսիմիլի միջոցով ներկայացված յուրաքանչյուր ծանուցման օրինակ պետք է նամակով ուղարկվի համապատասխան կողմին ամենաուշը հաջորդ Աշխատանքային Օրը:

Սույն Համաձայնագրի դրույթների համաձայն Շահառուի կողմից թողարկված ծանուցումները, ըստ Բանկի պահանջի, պետք է առաքվեն Բանկ Շահառուի անունից այդպիսի ծանուցումը ստորագրելու լիազորություն ստացած անձի կամ անձանց լիազորության բավարար ապացույցների հետ միասին:

## **Հոդված 20 – Ուժի մեջ մտնելը**

Սույն Համաձայնագիրը պայմանական է և ուժի մեջ է մտնում միայն Բանկի կողմից՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, սույն Համաձայնագրի Հոդված 5.2(a)(i)-ով պահանջված ապացույցը ստանալուց հետո:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ չի մտնի, քանի դեռ Բանկը Շահառուին չի ուղարկել նամակ, որով կհաստատի վերոնշյալ բոլոր պայմանների իրականացումը և կտրամադրի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը (“Ուժի մեջ մտնելու ամսաթիվ”), և այսպիսի նամակը կհանդիսանա վերջնական ապացույց, որ սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտել:

Տարամեկնաբանությունից խուսափելու համար՝ մինչև Բանկի կողմից այդ նամակի թողարկումը ո՛չ Շահառուն, ո՛չ Բանկը չպետք է հայց ներկայացնեն միմյանց դեմ և չեն կրի որևէ պատասխանատվություն սույն Համաձայնագրի շրջանակներում և դրա առնչությամբ:

Սույն Համաձայնագրի ստորագրումից հետո 24 (քսանչորս) ամսվա ընթացքում վերոնշյալ պայմանները չկատարելու դեպքում, սույն Համաձայնագիրն այլևս չի մտնի ուժի մեջ առանց որևէ այլ հետագա գործողության անհրաժեշտության կամ պահանջի:

## **Հոդված 21 - Լեզու**

Սույն Համաձայնագրի շրջանակներում Շահառուի կողմից պատրաստված կամ տրամադրված փաստաթղթերը, ապացույցները, ծանուցումները կամ հաղորդակցությունները պետք է տրամադրվեն անգլերեն լեզվով, եթե փաստաթղթի բնօրինակն այլ լեզվով չէ, որի դեպքում փաստաթուղթը Բանկին է ներկայացվում բնօրինակ լեզվով և վերջինիս վավերացված անգլերեն թարգմանությամբ:

## **Հոդվա 22 – Ամբողջ համաձայնագիրը**

(a) Սույն Համաձայնագիրը՝

(i) ներկայացնում է Համաձայնագրի ամբողջական հասկացությունը և սահմանում է Կողմերի միջև դրա առարկայի վերաբերյալ համաձայնության ամբողջ ծավալը, և

(ii) փոխարինում է սույն Համաձայնագրի առնչությամբ Կողմերի միջև ցանկացած կամ բոլոր նախկին որոշումները, նամակագրությունը, ներկայացուցչությունները (ցանկացած բնույթի) և համաձայնությունները, անկախ այդպիսի ցանկացած նախնական համաձայնության որևէ պայմանների առկայության, որով այդ նախնական համաձայնության որևէ իրավունք կամ պայման պետք է գործի միջև դրա դադարեցումը:

(b) Կողմերից յուրաքանչյուրը գիտակցում է, որ չի կարող հիմնվել Կողմերից որևէ մեկի կողմից արված ցանկացած հայտարարության կամ ներկայացուցչության վրա, բացի սույն Համաձայնագրով ամրագրվածների:

## **Հոդված 23 - Օրինակներ**

Սույն Համաձայնագիրը կարող է կնքվել ցանկացած քանակի օրինակով և դրանք կունենան նույն ուժը, ինչ, որ կունենային, եթե սույն Համաձայնագիրը կնքվեր մեկ օրինակով: Օրինակներից յուրաքանչյուրը հանդիսանում է բնօրինակ, և բոլոր օրինակները միասին հանդիսանում են մեկ և միևնույն համաձայնագիրը:

## **Հոդված 24 - Հավելվածներ**

Սույն փաստաթղթերը կցված են սույն Համաձայնագրին և կազմում են դրա անբաժան մասը.

Հավելված I: Ծրագրի բնութագրեր

Հավելված II: Վճարման հայտ

Հավելված III: Դրամաշնորհի ծախսերի հիմնավորում

Հավելված IV: Հաշվետվության ձևանմուշ

Հավելված V: Շահառուի ֆինանսական հաշվետվության ձևանմուշ

**Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈՐԳՅԱԼԻ՝** Կողմերն ապահովել են սույն Համաձայնագրի կնքումը 3 (երեք) բնօրինակով անգլերեն լեզվով՝ 2 (երկու) բնօրինակ Բանկի և 1 (մեկ) բնօրինակ Երևանի քաղաքապետարանի համար և ապահովել են, որ յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչն իրենց անունից ստորագրի սույն Համաձայնագրի յուրաքանչյուր էջը:

Երևան, 8 հունիսի, 2018թ.

Ստորագրված անունից և կողմից Ստորագրված անունից և կողմից

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ**

---

Տարոն Մարգարյան

**Երևանի քաղաքապետ**

Լիոնել Ռապել

**Վարչության ղեկ.**

Դիրկ Էլերկման

**Վարչության ղեկ.**

**Ծրագրի բնութագրեր**

Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին իրականացնել վերականգնողական ծրագիր, ներառյալ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի միջոցների ինտեգրմանը հասարակական շենքերում:

Դրամաշնորհը կհամաֆինանսավորի Ծրագիրը (բացառելով սեյսմիկ միջոցառումները, ՄԱԶԾ-ի կողմից մոբիլիզացված ԿԿՀ ՏԱ և ջնախատեսված դեպքերը):

Ընդհանուր ներդրումը նախատեսվում է ֆինանսավորվել հետևյալ կերպ.

| Ծրագրի ինդիկատիվ EE և RE բյուջե (եվրո միլիոն)                                               |                 |                                                                                                                                                    |
|---------------------------------------------------------------------------------------------|-----------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>ԵՆԲ վարկ մաս A</b><br>(E5P դրամաշնորհով համաֆինանսավորվող բաղադրիչներ)                   | <b>5,00</b>     | <ul style="list-style-type: none"> <li>- Հասարակական շենքերի վերանորոգում</li> <li>- Շենքերի արտաքին պատող կոնստրուկցիայի բարելավումներ</li> </ul> |
| <b>E5P դրամաշնորհ</b>                                                                       | <b>5,00</b>     | <ul style="list-style-type: none"> <li>- Լուսավորման համակարգերի վերազինում</li> <li>- Ջեռուցման համակարգերի արդիականացում</li> </ul>              |
| <b>Քաղաքապետարանի սեփական միջոցներ</b>                                                      | <b>2,00</b>     | <ul style="list-style-type: none"> <li>- Վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրում</li> <li>- Օդափոխության համարագեր</li> </ul>                 |
| <b>ԵՆԲ վարկ մաս B</b><br>(E5P դրամաշնորհով համաֆինանսավորվող բաղադրիչներից զատ բաղադրիչներ) | <b>2,00</b>     | <ul style="list-style-type: none"> <li>- Սեյսմիկ միջոցառումներ</li> <li>- Չնախատեսված դեպքեր</li> </ul>                                            |
| ՄԱԶԾ-ի կողմից մոբիլիզացված <b>Կանաչ կլիմային հիմնադրամ (ԿԿՀ)</b>                            | <b>1,00</b>     | <ul style="list-style-type: none"> <li>- Տեխնիկական աջակցություն իրականացման փուլում և ծրագիրը հաջորդ փուլ տեղափոխելու համար</li> </ul>            |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>                                                                            | <b>15մ եվրո</b> |                                                                                                                                                    |

Երևանի քաղաքապետարանը պետք է պայմանագրային լիազորություններ ունենա Ծրագրի իրականացման համար:

Վճարման հայտ

Հայաստան – Երևանի էներգաարդյունավետության Ծրագիր – E5P  
դրամաշնորհ

ամսաթիվ

Խնդրում ենք ընթացք տալ հետևյալ վճարմանը՝ Ծրագրի ֆինանսավորման համար.

Դրամաշնորհի անվանում՝ Երևանի էներգաարդյունավետության Ծրագիր – E5P  
դրամաշնորհ

Ստորագրման ամսաթիվ՝  Համաձայնագրի համար (եթե առկա է) F

| Անհրաժեշտ գումարը եվրոյով |                      |
|---------------------------|----------------------|
| Եվրո                      | գումար               |
| <input type="text"/>      | <input type="text"/> |

| Վճարման ամսաթիվ՝     | առաջարկվող           |
|----------------------|----------------------|
| <input type="text"/> | <input type="text"/> |

Վերապահված ԵՆԲ-ին

Դրամաշնորհի ընդհանուր գումարը

Մինչ օրս վճարված

Վճարման ենթակա մնացորդ

ԵՎՐՈ

|                      |
|----------------------|
| <input type="text"/> |
| <input type="text"/> |
| <input type="text"/> |
| <input type="text"/> |

Մնացորդը վճարումից հետո

Մուտքագրման հաշվեհամար՝

ՀՀ №.....

**(Խնդրում ենք ներկայացնել IBAN /Միջազգային բանկային հաշվի համար/  
ձևաչափով կամ տեղական բանկային պրակտիկային համապատասխանող  
պատշաճ ձևաչափով)**

BIC /ԲՆԾ/ կոդ №.....

Բանկի անվանումն ու հասցեն .....

Խնդրում ենք փոխանցել հետևյալ տեղեկատվությունը՝

Երևանի քաղաքապետարանի կողմից և անունից գործելու լիազորություն  
ստացած անձի անուն(ներ)ը և ստորագրություն(ներ)ը:

Հավելված III

### **Դրամաշնորհի ծախսերի հիմնավորում**

Դրամաշնորհի ծախսերի հիմնավորում. Յուրաքանչյուր պայմանագրի համար  
վճարված հաշիվ-ապրանքագրերի ցանկ (օր.ամիս.տարի)

Ծախսերի հիմնավորում. Յուրաքանչյուր պայմանագրի համար վճարված հաշիվ-  
ապրանքագրերի ցանկ.

Ծրագիր.

Քաղաքապետարան. Անուն

| Պայմանագիր 1: անվանում                   |                                     |                            |                                           |
|------------------------------------------|-------------------------------------|----------------------------|-------------------------------------------|
| Հաշիվ-ապրանքագրի հ./ Ամսաթիվ             | Գումար (FX-արտարժույթ)<br>Առանց ԱԱՀ | Գումար (եվրո)<br>Առանց ԱԱՀ | Բանկային քաղվածք տեղեկանք/վճարման ամսաթիվ |
|                                          |                                     |                            |                                           |
|                                          |                                     |                            |                                           |
|                                          |                                     |                            |                                           |
| Ամբողջ վճարված գումարը մինչև (ամսաթիվ 1) |                                     |                            |                                           |
|                                          |                                     |                            |                                           |
|                                          |                                     |                            |                                           |
|                                          |                                     |                            |                                           |
|                                          |                                     |                            |                                           |
| Ամբողջ վճարված գումարը մինչև (ամսաթիվ 2) |                                     |                            |                                           |

| Պայմանագիր 2: անվանում                   |                                     |                            |                                   |
|------------------------------------------|-------------------------------------|----------------------------|-----------------------------------|
| Հաշիվ-ապրանքագրի հ./ Ամսաթիվ             | Գումար (FX-արտարժույթ)<br>Առանց ԱԱՀ | Գումար (եվրո)<br>Առանց ԱԱՀ | Բանկային քաղվածք տեղեկանք/ամսաթիվ |
|                                          |                                     |                            |                                   |
|                                          |                                     |                            |                                   |
|                                          |                                     |                            |                                   |
| Ամբողջ վճարված գումարը մինչև (ամսաթիվ 1) | ձ.ձ' •1 •-<br>Sri                   | '1 t/ձ<br>*11 •?•          |                                   |
|                                          |                                     |                            |                                   |
|                                          |                                     |                            |                                   |
|                                          |                                     |                            |                                   |
|                                          |                                     |                            |                                   |
| Ամբողջ վճարված գումարը մինչև (ամսաթիվ 2) |                                     |                            |                                   |

Հաշվետվության ձևանմուշ

Սույն փաստաթուղթը իրենից ներկայացնում է Հաշվետվության ձևանմուշը: Չնայած առաջարկվող Հաշվետվության ձևանմուշը չի կարող կառավարել բոլոր ծրագրերը բոլոր ասպեկտներով և մանրամասներով, այն պետք է կիրառվի ստորև մանրամասնված ձևաչափով և բովանդակությամբ և արդյունքում պետք է արտացոլի ծրագրի առաջարկման սկզբնական հայտի բոլոր ասպեկտները, որ ներկայացվել է Հիմնադրամին և հաստատվել է Ներդրողների ասամբլեայի կողմից:

Հիմնական տեղեկատվություն Ծրագրի վերաբերյալ

- Ընդհանուր Ծրագրի նկարագրություն
- Ընդհանուր նպատակը — Ինչպես է ձեռքբերվել կամ ձեռքբերվելու Ընդհանուր նպատակը
- Ծրագրի նկարագրություն , ներդրման նախագիծ

| No | Ներդրում  | Արժեք<br>(Եվրո) | Տարեկան զուտ<br>եկամուտն ու<br>խնայողությունները<br>(EUR/a) | Իրականացման<br>ժամանակահատված |
|----|-----------|-----------------|-------------------------------------------------------------|-------------------------------|
| 1  |           |                 |                                                             |                               |
| 2  |           |                 |                                                             |                               |
| 3  |           |                 |                                                             |                               |
| 4  |           |                 |                                                             |                               |
| 5  |           |                 |                                                             |                               |
| n  |           |                 |                                                             |                               |
|    | Ընդհանուր |                 |                                                             |                               |

- Ծրագրի նկարագրություն, ֆինանսական նախագիծ
- Ծրագրի նկարագրություն, ինտիտուցիոնալ նախագիծ
- Ծրագրի նկարագրություն, կողմնակի միջոցառումներ
- Ծրագրի նկարագրություն, ծրագրի օգուտները

Ծրագրին առնչվող գնումներ

- Գնումների կարգավիճակը և նախագիծը
- Խնդիրներ, եթե առկա են և լուծման ուղիներ
- Տեղեկատվություն ձեռք բերված սարքավորումների կամ ծառայությունների մասին, ներառյալ՝ մատակարարի ինքնությունը եւ ազգությունը

Ծրագրին առնչվող գործողություններ

- Ծրագրի փուլերի, մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանի ընդհանուր առաջընթացը
- Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ծրագրված / ակնկալվող առաջընթաց
- Խնդիրներ, եթե առկա են և լուծման ուղիներ

### Դրամաշնորհի հիմնավորում

#### Ուղղակի ներդրումներ

- Նկարագրել էներգիայի և/կամ էլեկտրաէներգիայի սպառումը և քիմիական նյութերի այլ սպառումները և այլն, որ կարող են ազդեցության ենթարկվել Ծրագրի արդյունքում: Սպառումը պետք է նկարագրվի որպես ներկա սպառում մատակարարված էներգիայի և սպառված քանակի տեսանկյունից:
- Նկարագրել և ներկայացնել ծրագրի և դրամաշնորհի արդյունքում ստացված կամ պլանավորված խնայումները, մասնավորապես CO<sub>2</sub>-ի, այլ ջերմոցային գազերի նվազումները, ինչպես նաև այլ կոմունալ ծառայությունները, ինչպիսիք են արդյունաբերական ջուրը, քիմիական նյութերը և այլն:
- Հաշվարկների իրականացման համար խնայումները կհիմնվեն 15 տարվա ժամանակահատվածի վրա, և կկիրառվի 10 % զեղչային դրույքաչափ:
- Խնայողությունները կնկարագրվեն նաև դրամական տեսանկյունից
- Ցանկացած ածխածնային վարկերի ներուժ պետք է հատուկ նշվի:

|                                 | Չփանիշ | Ներկա սպառում p/a | Պլանավորված խնայումներ p/a | Պլանավորված խնայումներ Ծրագրի իրականացման ժամանակահատվածում |
|---------------------------------|--------|-------------------|----------------------------|-------------------------------------------------------------|
| Գազ                             | Մ3/տ   |                   |                            |                                                             |
| Էլեկտրաէներգիա                  | ՄՎտժ   |                   |                            |                                                             |
| Այլ ջերմոցային գազեր            |        |                   |                            |                                                             |
| Արդյունաբերական ջրի օգտագործում |        |                   |                            |                                                             |
| Ածուխ                           |        |                   |                            |                                                             |
|                                 |        |                   |                            |                                                             |
| Նվազեցված CO <sub>2</sub>       | տոննա  | -                 |                            |                                                             |

### Ծրագրին առնչվող կանոնակարգող հարցեր

- Նկարագրել ներկայացված կանոնակարգող հարցերի/ներդրումների կարգավիճակը, ինչպես են հարցերը մշակվել և ավելացվել ծրագրին կամ պլանավորվում ավելացնել ծրագրին:
- Փորձել նկարագրել խնայումները, որպես կանոնակարգող ներդրումների

արդյունք

- Նկարագրել դրամաշնորհի լրացուցչությունը ծրագրի կայունությանը և ինչպես է դրամաշնորհը օգտագործվել հիմնական խնդիրներին թիրախավորելու համար առանց շուկան հաշվի առնելու:

### **Ծրագրին առնչվող ֆինանսական հատկացումներ**

- Հաշվետու ժամանակահատվածի կտրվածքով դրամաշնորհի օգտագործման նկարագրություն, ինչպես նաև ընդհանուր:

|                                                      | Հաշվետու<br>ժամանակա<br>հատված<br>EUR | Ընդհանուր<br>EUR |
|------------------------------------------------------|---------------------------------------|------------------|
| Հիմնադրամից ստացված փոխանցումներ                     |                                       |                  |
| Դրամաշնորհի հատկացումներ հիմնադրամային միջոցներ 1-ից |                                       |                  |
| Դրամաշնորհի հատկացումներ հիմնադրամային միջոցներ 2-ից |                                       |                  |
| Դրամաշնորհի հատկացումներ հիմնադրամային միջոցներ 3-ից |                                       |                  |
| Դրամաշնորհի հատկացումներ հիմնադրամային միջոցներ N-ից |                                       |                  |
|                                                      |                                       |                  |
| <b>Մնացորդը ժամանակաշրջանի ավարտին</b>               |                                       |                  |

- Խնդրում ենք ներառել նաև ընդհանուր հատկացումների ժամանակացույց՝ ներառելով բանկային ֆինանսավորումը, սեփական ֆինանսավորումը և այլն.

### **Ծրագրի ժամանակացույց**

- Թարմացնել ներկայացված նախնական ժամանակացույցը և ներառել ուշացումների կամ ժամանակացույցից առաջ ընկնելու պատճառները:

### **Ծրագրին առնչվող այլ տեղեկատվություն**

- Ցանկացած գործոն, որ կարող է նյութական անբարենպաստ ազդեցություն ունենալ ծրագրի կամ ֆինանսավորման պլանի վրա:

## Շահառուի ֆինանսական հաշվետվության ձևանմուշ

Համաձայնագրի համար՝

Հաշվի համար՝

Բանկ: [ ] ՀՀ կենտրոնական բանկ

Հասցե: [ ] Վազգեն Սարգսյան 6, Երևան 0010,

Հաշվեհամարի արժույթ՝ Եվրո

Հաշվեհամարի սեփականատեր՝ Երևանի  
քաղաքապետարան

|                                                                     | Ժամանակաշրջանի համար | Ընդհանուր |
|---------------------------------------------------------------------|----------------------|-----------|
| Կանխիկ հաշվեկշռի շարժ                                               | EUR                  | EUR       |
| Դրամաշնորհային հաշվեհամարի հաշվեկշիռը ժամանակաշրջանի սկզբին         | x                    | -         |
| ԵՆԲ-ից ստացված փոխանցումներ                                         | x                    | x         |
| Կատարված դրամաշնորհային հատկացումներ                                | (x)                  | (x)       |
| <b>Դրամաշնորհային հաշվեհամարի հաշվեկշիռ ժամանակաշրջանի վերջում*</b> | <b>x</b>             | <b>-</b>  |

\*

Կցել հաշվեկշռի հաշվետվության պատճենն՝ փականան հաշվեկշիռը

Շահառուի կողմից բացված, պահպանված և կառավարվող հաշվին կիրառվում են դրական կամ բացասական տոկոսների տոկոսադրույք: ՀՀ

Կենտրոնական բանկի կողմից հաշվետվություններում  
կիրառվող տոկոսների նկատմամբ քաղաքականության  
փոփոխության դեպքում շահառուն բեռը կրում է  
բացասական տոկոսադրույքի դեպքում և ստանում է  
շահույթը դրական տոկոսադրույքի պարագայում:

